ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

*Հարգելի՛ պարոն Միրզոյան,*

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Գովազդի մասին» օրենքում լրացում կատարելու մասին և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագիծ) և

Խնդրում ենք

Ներկայացված Նախագծերը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կից ներկայացվում են՝

1. Նախագծերը (հիմնական զեկուցող՝ Վիկտոր Ենգիբարյան),
2. Նախագծերի ընդունման հիմնավորումը,
3. փոփոխվող օրենքների հոդվածների մասին տեղեկանքները:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պատգամավորներ՝

Վիկտոր Ենգիբարյան

Նիկոլայ Յու. Բաղդասարյան

Սերգեյ Մովսիսյան

:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1 Հայաստանի Հանրապետություն մուտք գործող և շահագործվող տրանսպորտային միջոցների, երկաթուղային տրանսպորտի և դրանց կցորդների վրա թույլատրվում է տեղադրել միայն այդ միջոցի տնտեսական գործունեություն իրականացնողի անվանմամբ, գտնվելու վայրի և այլ կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկությունները, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով կամ օրենքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Գովազդը տրանսպորտում

Տրանսպորտային միջոցներում գովազդը տեղաբաշխվում է դրանց սեփականատիրոջ համաձայնությամբ:
Անվտանգ երթևեկության ապահովման նպատակներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանափակումներ է մտցնում տրանսպորտային միջոցներում առանձին գովազդների տեղաբաշխման ուղղությամբ:
1.1 Հայաստանի Հանրապետություն մուտք գործող և շահագործվող տրանսպորտային միջոցների, երկաթուղային տրանսպորտի և դրանց կցորդների վրա թույլատրվում է տեղադրել միայն այդ միջոցի տնտեսական գործունեություն իրականացնողի անվանմամբ, գտնվելու վայրի և այլ կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկությունները, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով կամ օրենքով:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 124.2-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը «վրա» բառից հետո լրացնել «տեղեկությունների և» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում «124-124.4» թվերը փոխարինել «124, 124.1, 124.2 (բացառությամբ Հայաստանի Հանրապետության սահմանը հատող տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ), 124.3, 124.4» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 234-րդ հոդվածը «3-րդ մասով» բառից հետո լրացնել «124.2 (տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ, ով հատում է Հայաստանի Հանրապետության սահմանը)» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 124.2 Տրանսպորտային միջոցի վրա տեղեկությունների և գովազդի տեղադրման կարգը խախտելը

1. Տրանսպորտային միջոցի վրա տեղեկությունների և գովազդի տեղադրման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Հոդված 224. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 44.1, 44.2, 47.14, 53, 95, 110.1, 110.2, 111, 123-123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124, 124.1, 124.2 (բացառությամբ Հայաստանի Հանրապետության սահմանը հատող տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ), 124.3, 124.4 ~~124-124.4~~, 124.6, 125-126, 128, 129.2, 129.3, 131, 132, 134, 135.1, 135.2, 139, 140, 153, 160, 169.23, 172.2, 173, 173.2, 175, 177, 178, 178.1, 179.1, 180 (բացառությամբ հինգերորդ և վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 181, 182.3, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) և 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով, 183, 184, 186 (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8, 190-193, 195.1-196, 199, 200 և 201-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Հոդված 234. Մաքսային մարմինները

Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները քննում են սույն օրենսգրքի 47.15-րդ հոդվածի 6-րդ մասով, 123 հոդվածի 3-րդ մասով, 124.2 (տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ, ով հատում է Հայաստանի Հանրապետության սահմանը) 137.1 հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 150.3, 201.2 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների դեպքում մաքսային հսկողության գոտում հայտնաբերված իրավախախտումների մասով, 169.2 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային մարմին ներկայացվող վիճակագրական տեղեկատվության մասով, 170.3 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային իրավահարաբերությունների մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 189-204 հոդվածներով նախատեսված մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործերը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս սահմանը հատող տրանսպորտային միջոցների վրա տեղադրված տեղեկատվության և գովազդի մասով մաքսային մարմիններն որևէ հսկողություն չեն իրականացնում: Օրենսդրությամբ այդ գործառույը վերապահված է Հայաստանի Հանրապետության Ոստիկանությանը: Սահմանը հատելուց տրանսպորտային միջոցի վրա տեղադրված տեղեկատվության և գովազդի մասով մաքսային մարմիններին հսկողություն իրականացնելու գործառույթ վերապահելով՝ մենք կբացառենք, որ օրենքի խախտմամբ տեղադրված տեղեկատվությամբ և գովազդով տրանսպորտային միջոցը մուտք գործի Հայաստանի Հանրապետության տարածք, ավելի նպատակային դարձնելով իրականացվող վարչարարությունը:

Նախագծի նպատակն է ոչ միայն կանոնակարգել տեղեկատվության և գովազդի տեղադրումը տրանսպորտային միջոցների վրա, այլ նաև օրենսդրությամբ բացառել այն տրանսպորտային միջոցների մուտքը Հայաստանի Հանրապետության սահման, որոնց վրա տեղադրված տեղեկատվությունն և գովազդը կհակասեն օրենքին:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման դեպքում կբացառենք օրենքի խախտմամբ տեղադրված տեղեկատվությամբ և գովազդով տրանսպորտային միջոցի մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք: